ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԽՈՍՆԱԿ ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆԸ ԵՆԹԱՐԿՎԵԼ Է ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ

30.10.2015 15:34

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 19.10.2015թ. թիվ 195-Ա հրամանով ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի նկատմամբ հարուցվել էր աշխատանքային կարգապահական վարույթ:

Կարգապահական վարույթի հարուցման համար հիմք էր հանդիսացել զանգվածային լրատվության տարբեր միջոցներում, ինչպես նաև սոցիալական կայքերում լայն քննարկման առիթ դարձած xnews.am լրատվական կայքում *06.07.2015թ. «**Փաստաբաններն իրարից հաղթանակնե՞ր են «գողանում»**»* *վերտառությամբ և 30.07.2015թ. «**Ո՞րն է այն շարժառիթը, որ ստիպում է նախկին ամբաստանյալին պատժել իրեն պաշտպանած հանրային պաշտպանին**» վերտառությամբ հոդվածների հրապարակման հետ ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի առնչության վարքագիծը ստուգելու անհրաժեշտությունը:*

ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից 2015թ. հոկտեմբերի 29-ին ընդունվել է **«ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» թիվ 206-Ա հրամանը**, համաձայն որի՝ ***ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության և նրա նկատմամբ որպես կարգապահական պատասխանատվության միջոց՝ կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը:***

Առաջարկվող նորություններ

19.10.2015ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&

parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })